

Հավելված N 1

Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ,
տարածքային կառավարման նախարարի
« » _____ 2014 թվականի N ____ հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ 2014-2017 թթ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

2014թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ԳՅՈՒՄՐԻ 2014թ.

1. Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ -----	3
ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՈՒՄ-----	4
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ-----	5
Կրթություն -----	5
Մշակույթ և սպորտ -----	10
Առողջապահություն-----	12
Սոցիալական պաշտպանություն-----	13
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ-----	15
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ-----	17
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ -----	19
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ-----	20
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ-----	22
ՀԱՎԵԼՎԱԾ 1. 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԸ-----	1-52

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 6-ի թիվ 112-Ն որոշմամբ հաստատվեց Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 2014-2017 թվականների սոցիալ-տնտեսական

զարգացման ծրագիրը: Որոշման 3-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետը մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 10-ը մշակում է Մարզային Զարգացման Ծրագրի տարեկան աշխատանքային պլանը և այն ներկայացնում է Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի հաստատմանը, ինչպես նաև որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում ապահովվում է համայնքների, հասարակական կազմակերպությունների և անկախ փորձագետների ակտիվ մասնակցությունը:

Սույն տարեկան աշխատանքային պլանը կազմվել է ի կատարումն ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 6-ի թիվ 112-Ն որոշման: Տարեկան աշխատանքային պլանի կազմման նպատակն է ապահովել ՄԶԾ-ով տվյալ տարվա համար նախատեսված միջոցառումների իրականացումը, ամփոփել պլանավորված միջոցառումները, արդյունքները և ֆինանսական ներդրումները: Այն կազմված է 2014 թվականի համար՝ Հայաստանի Հանրապետության 2014 թվականի հաստատված պետական բյուջեի և ՄԶԾ-ով նախատեսված միջոցառումների հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով միջազգային և այլ կազմակերպությունների կողմից ՀՀ Շիրակի մարզում 2014 թվականին նախատեսվող ներդրումային ծրագրերի վերաբերյալ մարզպետարանին տրամադրված տեղեկատվությունը:

ՏԱՊ-ի նպատակներն են.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի իրականացման 2014թ. տարեկան աշխատանքային պլանի /ՏԱՊ/ հիմնական նպատակն է Շիրակի մարզային զարգացման ծրագրի «Տարեկան աշխատանքային պլանն» ընդհանուր գծերով նկարագրելը: ՄԶԾ-ում 2014-2017 թվականների համար սահմանվել են աղքատության հիմնական պատճառները և ուրվագծվել է աղքատության հաղթահարմանն ուղղված ներդրումների պլանը: Ներդրումների պլանում տեղ են գտել միջոցառումներ, որոնց նպատակն է աղքատության հաղթահարումը՝ տնտեսական աճի և մարդկային զարգացումը խթանելու միջոցով: Տարեկան աշխատանքային պլանը աջակցելու Մարզային Զարգացման Ծրագրի իրականացման աշխատանքներին: Մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի իրականացման 2014թ. տարեկան աշխատանքային պլանը նպատակ ունի.

- Համախմբել հնարավոր բոլոր ռեսուրսները ՄԶԾ-ով նախատեսված 2014 թվականին իրականացվելիք միջոցառումների իրականացման համար
- Շաղկապել նախատեսված միջոցառումները ՄԶԾ-ի արդյունքների հետ՝ «տրամաբանական հենքի» համակարգի օգնությամբ
- Միջոցառումների իրականացման ցուցանիշները և արդյունքները ներառել տրամաբանական հենքում
- Սահմանել այն կազմակերպությունները, որոնք պատասխանատու են կոնկրետ միջոցառումներն իրականացնելու համար,
- Ֆինանսական միջոցներով դեռևս չապահովված միջոցառումների համար սահմանել ֆինանսավորման ռազմավարություններ:

Ընդհանուր առմամբ ՏԱՊ-ում ներկայացվել են այն միջոցառումները, որոնց 2014 թվականի ընթացքում իրականացման համար պատասխանատու է լինելու մարզպետարանը, ինչպես նաև արձանագրվում են այն

հիմքերը, որոնց վրա կառուցվելու են Ծրագրի իրականացման մոնիտորինգի աշխատանքները: Բոլոր նախատեսվող միջոցառումները մանրամասնեցված են հավելվածում արձանագրված «<Տարեկան աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումների տրամաբանական հենքում>>:

1. ՓՄՁ և մասնավոր հատվածի զարգացում

ՀՀ Շիրակի մարզի տնտեսական և սոցիալական զարգացման գործում այսօր առաջնահերթ տեղը պատկանում է փոքր և միջին ձեռնարկատիրությանը: Վերջիններիս դերը մարզի տնտեսության վերականգնման և զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, ինչպես նաև միջին խավի ձևավորման գործում, կարևորվել է մեր հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ուղղությամբ իրականացվող քաղաքականության շնորհիվ:

Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման, տարածաշրջանների զարգացման անհամաչափությունների նվազեցման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է:

ՀՀ Շիրակի մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2014թ. տարեկան աշխատանքային պլանով նախատեսվում է ընդլայնել գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտների ձեռնարկատիրությամբ զբաղվելու հնարավորությունները, նախապատվություն տալով մարզի հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի սուբյեկտներին, բարելավել գործարար միջավայրը, ստեղծել ձեռնարկատիրության զարգացման համար հավասար հնարավորությունների ու բարենպաստ մրցակցային դաշտ:

Աջակցություն կցուցաբերվի արտահանման ներուժ և ներդրումների կարիք ունեցող ՓՄՁ սուբյեկտներին, ՓՄՁ աջակցության գործող կառույցներին, ինչը կարող է նպաստել նոր ստեղծվող կազմակերպությունների աճին, աշխատատեղերի ստեղծմանը և գործող աշխատատեղերի պահպանման միջոցով մարզում գործազրկության մակարդակի կրճատմանը, ապահովել թողարկվող արտադրանքի ծավալների աճ, ներդրումային ռիսկի նվազեցում և արտերկրների հետ տնտեսական համագործակցության կազմակերպում:

Օժանդակություն կցուցաբերվի մարզի համայնքներում գյուղմթերքի վերամշակման արտադրական փոքր կազմակերպությունների ստեղծմանը, գյուղատնտեսական ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացմանը, մասնավոր ներդրումների խթանման միջոցառումների կազմակերպմանը, մարզի տարածաշրջաններում մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի իրականացմանը, ինչը կբարելավի գործարար միջավայրը և հատկապես մասնավոր ներդրումների մրցակցային պայմանները:

Կշարունակվի պետական աջակցությամբ իրականացվող վարկային երաշխավորությունների տրամադրումը մարզում գործող ՓՄՁ սուբյեկտներին, ապրանքների ու մատուցվող ծառայությունների շուկաներ առաջնորդման ու այլ ծրագրերի իրականացումը, ներդրումային ծրագրերը ֆինանսավորելու նպատակով միջոցառումներ կիրականացվեն առկա վարկային ռեսուրսները մատչելի դարձնելու համար:

Ակնկալվում է, որ 2014թ. կավելանա ՓՄՁ-ների կողմից թողարկվող արտադրանքի տեսակարար կշիռը մարզում թողարկվող արտադրանքի ընդհանուր ծավալում: Փոքր ու միջին ձեռնարկատիրության աջակցության պետական ծրագրի շրջանակներում մարզի գործարարների համար կիրականացվեն ուսուցողական և խորհրդատվական դասընթացներ, կֆինանսավորվեն գործարար ծրագրեր:

ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության /UNIDO/ Հայաստանի ծրագրերի գրասենյակի հետ համատեղ կիրականացվի <<Ձեռնարկատիրական աշխատանք երիտասարդության համար>> ծրագիրը, որով աջակցություն կցուցաբերվի մարզի 18-35 տարեկան սկսնակ գործարարներին, մասնավորապես երիտասարդ ընտանիքներին և կանանց:

2014թ. իր գործունեությունը կսկսի Գյումրու Տեխնոլոգիական Կենտրոնը /Տեխնոպարկ/, որը կնպաստի գիտության և նորարարության արդյունքները մարզի արդյունաբերության մեջ ներդնելու համար:

Տարվա ընթացքում Գերակայություն կտրվի մշակող և հանքարդյունաբերության ճյուղերի զարգացմանը, իսկ մշակող արդյունաբերության մեջ թեթև արդյունաբերությանը /մանածագործական, գուլպեղենի, կարի և տրիկոտաժի/, սննդի և շինանյութերի արտադրություն ենթաճյուղերին:

Հաշվի առնելով տեղեկատվական տեխնոլոգիաների նկատմամբ անընդհատ աճող հետաքրքրությունը, տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի և համապատասխան գիտական ներուժի առկայությունը, աջակցություն կցուցաբերվի բարձր տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների պատրաստմանը, արտադրությունների և ծառայությունների ստեղծմանը, որին մեծապես կնպաստի մարզում ստեղծված առաջին անվճար առցանց SS համալսարան-համայնք` LearnIT.am ծրագիր:

Միջոցառումներ կիրականացվեն մարզի տարածաշրջաններում այլընտրանքային էլեկտրաէներգիայի արտադրություն կազմակերպելու ուղղությամբ:

Կիրականացվի գործարար տեղեկատվության փոխանակում հանրապետության մյուս մարզերի և արտերկրների հետ. կշարունակվի առևտրատնտեսական համագործակցությունը արտերկրների հետ:

Անհրաժեշտ է բարձրացնել Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման պետական աջակցության արդյունավետությունը, դարձնելով այն լիարժեք, հասցնել մարզի բոլոր համայնքներին, նպաստել մարզի տարածաշրջանների համամասնական զարգացմանը:

Մարզի բոլոր տարածաշրջանների համար գերակա ոլորտներ են գյուղմթերքների վերամշակումը և իրացումը, զբոսաշրջությունը և հարակից ծառայությունները: Սակայն, որպեսզի ներդրումները արդարացված լինեն և նվազի նրանց ռիսկայնությունը անհրաժեշտ է հստակեցնել այդ ապրանքների և ծառայությունների պահանջարկի ծավալները և իրացման շուկաները: Այս խնդիրների լուծման համար որոշիչ է մարզպետարանի և շահագրգիռ այլ կազմակերպությունների դերը ինչպես տարածաշրջանային ծրագրերի մշակման, այնպես էլ տարեկան աշխատանքային պլանների շրջանակներում մասնավոր ներդրողներին խրախուսելու գործում:

ՀԱՄԵՄՍՏԱԿԱՆ

ՀՀ Շիրակի մարզի 2014-2017 թթ. սոցիալ - տնտեսական զարգացման ծրագրի մասնավորհատվածի և ՓՄՁ ոլորտի 2014թ. գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի

մկն դրամ

Ոլորտը/ֆինանսավորման աղբյուրը	2014թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի	2014թ.ՏԱՊ-ով նախատեսվող իրատեսական ծրագրերը	ՄՁԾ-ով նախատեսված և ՏԱՊ-ի ֆինանսական միջոցների տարբերությունը /շեղում/
ՓՄՁ և մասնավոր հատված	1550.0	1550.0	0
որից`			

ՀՀ պետական բյուջե			
դոնորներ	50.0	50.0	0
համայնքային բյուջե			
Այլ աղբյուրներ /մասնավոր ներդրողներ/	1500.0	1500.0	0

2. ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

2.1 Կրթություն

2014-2017թթ. ՀՀ Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի համաձայն ՀՀ Շիրակի մարզում 2014 թվականին իրականացվելիք միջոցառումները ուղղված են լինելու հանրակրթական համակարգում իրականացվող բարեփոխումների շարունակականությունն ապահովելուն: 2014թ. ընդլայնվելու է գյուղական համայնքների դպրոցներում նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացումը, ապահովվելու է վարչական աշխատողների և ուսուցիչների վերապատրաստումը՝ կրթական նոր ծրագրերին համահունչ որակական չափանիշների ձեռքբերման նպատակով, աջակցություն է ցուցաբերվելու ուսուցիչների ատեստավորման և որակավորման տարակարգերի շնորհման գործընթացներին, շարունակվելու են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար ուսումնական հաստատություններում համապատասխան պայմանների ստեղծման և բարելավման աշխատանքները:

2014թ. ընթացքում կիրականացվեն համապատասխան բժշկահոգեբանամանկավարժական ուսումնասիրություններ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող նոր երեխաների բացահայտման, նրանց կարիքի գնահատման և այդ արդյունքների հիման վրա ներառական կրթություն իրականացնող դպրոցների թվի ավելացման ուղղությամբ: Շարունակվելու է կրթական հաստատությունների նյութատեխնիկական և ուսումնամեթոդական բազայի համալրման, տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ներդրման նպատակով նոր ծրագրերի իրականացմանն ուղղված աշխատանքների իրականացումը, կկազմակերպվի գյուղական համայնքների դպրոցահասակ երեխաների երթևեկությունը համապատասխան աստիճանի կրթություն իրականացնող դպրոց:

Ընթացիկ տարում ակնկալվում է շարունակել դպրոցների վերանորոգման, մարզադահլիճների և խաղահրապարակների կառուցման, տեխնիկական վերազինման ու գույքի թարմացման միջոցառումները: Կշարունակվեն ուսուցիչների վերապատրաստման աշխատանքները: 2014 թվականին շուրջ 600 ուսուցիչ կանցնի վերապատրաստում մեկ կամ մեկից ավելի թեմատիկ ուղղվածությամբ:

ՀՀ Շիրակի մարզպետարանի իրավասության ներքո գործում են 153 պետական ուսումնական հաստատություններ, որոնցից 150-ը հանրակրթական, 2-ը՝ հատուկ կրթության, 1-ը՝ երեկոյան: Մարզում գործում են նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության 13 ավագ դպրոցներ, 2 վարժարան, ԳՊՄԻ-ի և ՀՊՃՀ-ի հենակետային ավագ դպրոցները, ՀՊՏՀ-ի հենակետային վարժարանը: Կազմակերպվում է նախադպրոցական, հանրակրթական, հատուկ կրթական, երեկոյան դպրոցում հանրակրթական, ներառական ծրագրերով կրթական ծառայությունների մատուցում:

Բարձրագույն մանկավարժական կրթություն ունի դպրոցներում աշխատող մանկավարժների 77.8%-ը, բարձրագույն ոչ մանկավարժական՝ 3.8%-ը, միջին մասնագիտական մանկավարժական՝ 15.1%-ը, թերի բարձրագույն 3,3%-ը: Մանկավարժական կրթություն ունեն ուսուցիչների 92.6%-ը: Միայն միջնակարգ կրթությամբ ուսուցիչներ համակարգում չեն աշխատում:

ՀՀ Շիրակի մարզում գործում են 46 նախակրթարաններ, որտեղ հաճախում են 4332 երեխաներ: Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ 2014թ. «Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի շրջանակներում կշարունակվի «Օգնություն նախադպրոցական տարիքի երեխաներին» ենթածրագրի 2-րդ փուլը, որում ընդգրկված են մարզի թվով 29 դպրոցներ /3-ը՝ Գյումրի, 1-ը՝ Մարալիկ քաղաքներում, 25-ը՝ գյուղական համայնքների դպրոցներում/:

2014թ. մանկապարտեզներ չունեցող գյուղական 11 համայնքների դպրոցներում համայնքի և դպրոցի միջոցներով կիրականացվի «Օգնություն նախադպրոցական տարիքի երեխաներին» նախադպրոցական կրթական ծրագրի: Նախադպրոցական կրթության մեջ ներառված երեխաների թիվը կավելանա 366-ով, որոնք կֆինանսավորվեն Համաշխարհային բանկի կողմից: Իսկ նախադպրոցական կրթության իրականացման համար 2014թ. ՀՀ պետական բյուջեից Շիրակի մարզին նախատեսված 133085 հազ. դրամի փոխարեն հատկացվել է 133251.7 հազ դրամ 1278 նախադպրոցական տարիքի երեխայի կրթության իրականացման նպատակով:

«Հանրակրթական ուսուցում», «Հատուկ ընդհանուր կրթություն», «Արտադպրոցական դաստիարակություն», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության», «Երեկոյան կրթություն» ծրագրերի տարրական հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթության բաղադրիչները կֆինանսավորվեն ՀՀ պետական բյուջեից և կիրականացվեն ամբողջությամբ:

Կավելանա մարզում ներառական կրթություն իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների թիվը: 2014թ. այս ծրագրի իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեից ծրագրում ընդգրկված դպրոցներին հատկացված ֆինանսավորումը կազմում է 129937 հազ. դրամ՝ 253 սովորողների համար: Վերոհիշյալ դպրոցները ձեռք կբերեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ուսուցման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և սարքավորումներ, կատեղծեն վերականգնողական կաբինետներ, կունենան բժշկական սպասարկման, առողջապահական և բուժիչ-կանխարգելիչ միջոցառումների կազմակերպման հնարավորություններ և երեխաների հետ տարվող աշխատանքներում կներգրավվեն համապատասխան մասնագետներ:

Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) աջակցությամբ մարզի դպրոցների համակարգչային սարքավորումներով ապահովվածության միջին ցուցանիշը կազմում է 1 համակարգչին 25 աշակերտ: Կրթական գործընթացներում տեղեկատվական տեխնոլոգիաների առավել ներգրավումը կբարձրացնի կրթության բնագավառում մատուցվող ծառայությունների որակը, կնպաստի ներմարգային, միջմարգային և արտերկրի դպրոցների հետ միջդպրոցական կապերի ամրապնդմանն ու զարգացմանը: Այս առումով կարևորվում է 2011 թվականից մարզում իր գործունեությունը սկսած «Dasaran.am» կրթական ծրագրի առկայությունը, որը նախատեսում է նաև ինտերնետ կապի հասանելիության որակի բարձրացում: «Dasaran.am» կրթական ծրագրի շարունակական է և 2014թ. ակնկալվում է մարզի գյուղական համայնքների դպրոցների միացումը

նշված ծրագրին՝ զուգահեռաբար բարելավելով ինտերնետ կապի որակը, հատկապես մարզի սահմանային և բարձր լեռնային տարածքներում գտնվող դպրոցների համար:

2014 թվականին համաձայն 2014-2017թթ. ՄԶԾ-ի՝ մարզում վերանորոգված դպրոցական շենք և նորակառույց մարզադահլիճ կունենան 13 դպրոց, կկառուցվեն 3 դպրոցական շենքեր Արեգնադեմ, Վարդաքար և Ջաջուռ կայարան համայնքներում և 13-ը կվերանորոգվեն: Նորակառույց և վերանորոգված դպրոցական շենքերում կտեղադրվեն ջեռուցման նոր համակարգեր:

Հանրակրթության մատչելիության բարձրացման առումով էական է նաև հանրակրթությամբ իրականացվող ծրագրերից որևէ աստիճանի կրթական ծրագիր չիրականացնող դպրոց ունեցող գյուղական համայնքի դպրոցահասակ երեխաների՝ հարևան համայնքի դպրոց տեղափոխելու երթևեկության կազմակերպումը: Ներկայումս 2 համայնքներում և 3 բնակավայրերում դպրոցներ չեն գործում /դպրոցահասակ տարիքի սակավաթիվ երեխաներ ունենալու պատճառով/ և ուսման նպատակով համայնքից-համայնք երթևեկող երեխաների թիվը կազմում է 144 աշակերտ: 2014թ. այդ նպատակի համար հատկացված է պետական ֆինանսավորման շրջանակներում /10850.8 հազ. դրամ/ կկազմակերպվի նրանց երթևեկությունը համայնքից համայնք:

Դպրոցական գույքի ժամանակակից համակարգչային տեխնիկայի, այլ ուսումնասօժանողակ պարագաների ձեռքբերման ուղղությամբ իրականացվող տարբեր նախաձեռնություններին 2014թ. հնարավորինս կներգրավվեն դոնոր կազմակերպություններ, դրամաշնորհային ծրագրեր, առանձին բարերարներ: 2014-2017թթ. զարգացման ծրագրով 2014թ. նշված միջոցառումների իրականացման համար նախատեսված է ընդհանուր առմամբ 147.591 հազ. դրամ:

Ոլորտի զարգացման հետագա գործընթացը արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է բոլոր շահագրգիռ օղակների՝ պետական, միջազգային, համայնքային և հասարակական կազմակերպությունների ակտիվ համագործակցությունը:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ

ՀՀ Շիրակի մարզի 2014-2017 թթ. սոցիալ - տնտեսական զարգացման ծրագրի կրթության ոլորտի 2014թ. գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի

մլն դրամ

Ոլորտը/ֆինանսավորման աղբյուրը	2014թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄԶԾ-ի	2014թ.ՏԱՊ-ով նախատեսվող իրատեսական ծրագրերը	ՄԶԾ-ով նախատեսված և ՏԱՊ-ի ֆինանսական միջոցների տարբերությունը /շեղում/
Կրթություն	425.6	274.0	-151.6
<i>որից՝</i>			
ՀՀ պետական բյուջե	278.0	274.0	-4.0
դոնորներ	147.6	0	-147.6
համայնքային բյուջե			
Այլ աղբյուրներ /մասնավոր ներդրողներ/			

2.2 Մշակույթ և սպորտ

ՀՀ Շիրակի մարզում պետական մշակութային քաղաքականությունը իրականացվում է Շիրակի մարզպետարանի կողմից՝ տարբեր ենթակայությունների հետևյալ կազմակերպությունների միջոցով.

6 թանգարանների, 97 գրադարանների, 24 երաժշտական և արվեստի դպրոցների, քոլեջների, վարժարանների, 3 նվագախմբերի, 47 մշակույթի տների և սկումբների, 13 երգչախմբերի, 1 դրամատիկական թատրոնի, 1 տիկնիկային թատրոնի, 3 գեղարվեստի դպրոցների, գեղարվեստական կրթության ԲՈՒՀ-երի 3 մասնաճյուղերի:

Մշակույթի ոլորտում ՀՀ Շիրակի մարզում ՀՀ Կառավարության կողմից իրականացվող համապետական ծրագրերը պայմանավորված են ՀՀ Կառավարության գործունեության միջոցառումների ծրագրով: ՀՀ մարզերում մշակույթի համաչափ զարգացման ապահովումը ՀՀ կառավարության որդեգրած մշակութային քաղաքականության մեջ կարևոր հիմնական ուղղություն է: 2014 թվականին իրականացվելիք ծրագրերը ընդհանուր առմամբ նպատակ ունեն բաձրացնելու մշակույթի դերը, պահպանելու ազգային մշակութային արժեքները:

ՀՀ Շիրակի մարզի 2014-2017 թթ. սոցիալ - տնտեսական զարգացման ծրագրի 2014 թվականի տարեկան աշխատանքային պլանով Շիրակի մարզի մշակույթի ոլորտի առաջնային ռազմավարական նպատակներն են՝

Մշակույթի համակարգի գործունեության և կառավարման արդյունավետության զարգացումը, բյուջետային միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործումը, ոլորտի աշխատողների կարողությունների զարգացմանն ուղղված բարեփոխումների շարունակումը, մասնագիտական կրթության բնագավառում համապատասխան բարձր որակի ապահովումը:

Շիրակի մարզի մշակույթի ոլորտում 2014 թվականին աջակցություն կցուցաբերվի և կխթանվի ստեղծագործական գործունեությունը, կիրականացվեն միջոցառումներ մշակութային արժեքների պահպանման և տարածման, մշակույթի զարգացման ուղղությամբ:

Պետական բյուջեի մասին 2014թ ՀՀ օրենքով նախատեսված 73217.6 հազ. դրամը կուղղվի <<Երաժշտական, արվեստի դպրոցների ազգային, լարային, փողային նվագարանների գծով ուսման վարձավճարների փոխհատուցման>> պետական ծրագրում ընդգրկված 19 երաժշտական և արվեստի դպրոցներում սովորող թվով 377 աշակերների ուսման վարձավճարի փոխհատուցմանը, ինչը կնպաստի վերոնշյալ բաժիններում լիարժեք և արդյունավետ ուսումնական պրոցեսի կազմակերպմանը: Այս ոլորտում իրականացված աշխատանքների ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները՝ նախորդ երեք տարիների համեմատությամբ, ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Ցուցանիշներ	2011թ	2012թ	2013թ	2014 թ
Տարեկան ֆինանսավորման չափը /հազ. դրամ/	54322.0	52334.8	49303.4	73217.6
Ֆինանսավորում ստացած դպրոցների թիվը	22	21	21	19
Մեկ սովորողին փոխհատուցված վարձավճարի ամսեկան չափը	11040	11040	10455	16186.6

/գումարը. հազ. դրամ/				
Ծրագրում ընդգրկված սովորողների քանակը	410	395	392	377
Ծրագրի ուղղվածությունը ըստ մասնագիտական բաժինների	ազգային, լարային, փողային	ազգային, լարային, փողային	ազգային, լարային, փողային	ազգային, լարային, փողային

2014 թվականին ուշադրության կենտրոնում կպահվեն նաև մշակութային օջախների վերանորոգման և մշակութային միջոցառումների իրականացման հետ կապված խնդիրները:

Մշակութային միջոցառումների իրականացման, թանգարանային ծառայությունների և ցուցահանդեսների, երաժշտարվեստի ու պարարվեստի համերգների կազմակերպման համար 2014 թվականին նախատեսվում է 155752.5 հազ. դրամ ՀՀ պետական բյուջեի միջոցներից: <<Պետական աջակցություն մշակութային միջոցառումների իրականացմանը>> ծրագրով նախատեսված 3457.7 հազ դրամ միջոցների հաշվին 2014 թվականի ընթացքում մարզում կանցկացվեն թվով յոթ մշակութային միջոցառումներ՝ ուղղված ազգային և պետական տոների արժևորման գործընթացին:

Իրենց գործունեությունը մշակույթի պահպանմանը, տարածմանը և զարգացմանը կուղղեն մարզային ենթակայության երկու համերգային կազմակերպությունները և երկու թանգարանները:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ

ՀՀ Շիրակի մարզի 2014-2017 թթ. սոցիալ- տնտեսական զարգացման ծրագրի մշակույթի ոլորտի 2014թ. գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի

մլն դրամ

Ոլորտը/ֆինանսավորման աղբյուրը	2014թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄԶԾ-ի	2014թ.ՏԱՊ-ով նախատեսվող իրատեսական ծրագրերը	ՄԶԾ-ով նախատեսված և ՏԱՊ-ի ֆինանսական միջոցների տարբերությունը /շեղում/
Մշակույթ <i>որից՝</i>	189.7	228.9	+39.2
ՀՀ պետական բյուջե	189.7	228.9	+39.2
դոնորներ			
համայնքային բյուջե			
Այլ աղբյուրներ /մասնավոր ներդրողներ/			

Սպորտ

ՀՀ Շիրակի մարզում գործում են տարբեր գերատեսչական և հասարակական կազմակերպությունների ենթակայության 52 մարզական կազմակերպություններ /1 քուլեջ, 37 մարզադպրոց, 8 մասնաճյուղ, 4 ակումբ և 2 համայնքային կենտրոն/: Նշված մարզական կազմակերպություններ և դրանց մասնաճյուղ-խմբեր են գործում

մարզի 3 քաղաքային և 18 գյուղական համայնքներում: Մարզական ոլորտի աշխատանքներում ընդգրկված են նաև տարբեր մարզաձևերի քաղաքային և մարզային ֆեդերացիաներ ու արևելյան մարտարվեստի տարատեսակների խմբակներ: 25 մարզաձևերից գործող ուսումնական խմբերում ընդգրկված են շուրջ 11000 մարզիկ-մարզուհիներ:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում 2014թ. աշխատանքները կնպաստակառուղիվ են մարզի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում պետական քաղաքականության արդյունավետ իրագործմանը, բնակչության շրջանում ֆիզիկական ակտիվության զարգացմանը և առողջ ապրելակերպի արմատավորմանը, համայնքներում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի աշխատանքների բարելավման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, Օլիմպիական հերթափոխի և բարձրակարգ մարզիկների պատրաստմանը, նրանցով համայնքների, մարզի և հանրապետության հավաքական թիմերի համալրմանը:

- Աշխատանք կտարվի հանրակրթական դպրոցներում և մարզադպրոցներում ուսումնամարզական աշխատանքների վիճակի բարելավման, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության ֆիզիկական պատրաստականության ամրապնդման, մարզակառույցներում մարզումային համապատասխան պայմանների ստեղծման, մարզակառույցների բարեկարգման, վերանորոգման և հիմնանորոգման, հանրակրթական դպրոցներին ու մարզադպրոցներին մարզագույքով ու մարզահանդերձանքով ապահովման ուղղությամբ:

Ֆիզկուլտուրային-առողջարարական, մարզական ու մարզական զանգվածային միջոցառումների տարեկան օրացուցային պլանով կիրականացվեն ներքոհիշյալ միջոցառումները՝

- Մարզական ու ֆիզկուլտուրային-առողջարարական տարածաշրջանային ու մարզային միջոցառումների, ձմեռային ու ամառային մարզամշակութային տոնահանդեսների, միջոցառական սպորտլանդիաների կազմակերպում և անցկացում,
- ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից իրականացվող մարզական միջոցառումների /ՀՀ Նախագահի մրցանակների համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթ, <<Լավագույն մարզական բակ>>, <<Լավագույն գյուղական մարզական համայնք>> և <<Լավագույն քաղաքային մարզական համայնք>> ստուգատեսներ, ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոն, Նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության ռազմամարզական խաղեր, Սպորտլանդիա նախադպրոցական և դպրոցական հիմնարկներում/ տարածաշրջանային ու մարզային փուլերի կազմակերպում և անցկացում,
- ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից իրականացվող մարզական միջոցառումների / ՀՀ դպրոցականների 23-րդ մարզական խաղեր, շախմատի օլիմպիադա, ՀՀ Ազգային Ժողովի կողմից սահմանված գավաթի մրցումներ / տարածաշրջանային ու մարզային փուլերի կազմակերպում և անցկացում
- Տարբեր մարզաձևերից /աթլետիկա, բոնցքամարտ, ըմբշամարտ, ծանրամարտ, սամբո, շախմատ, լող/ Շիրակի մարզի պատանեկան առաջնությունների կազմակերպում և անցկացում
- Ուսումնամարզական հավաքների կազմակերպում, ՀՀ առաջնություններին, մարզական-զանգվածային միջոցառումների եզրափակիչ փուլերի մրցումներին համայնքների և մարզի հավաքական թիմերի մասնակցության ապահովում

- Հաշմանդամների <<Փյունիկ>> միության Գյումրու կենտրոնի և <<Հաշմանդամների մարզամշակութային կենտրոն>> ՀԿ-ի հետ համատեղ հաշմանդամություն ունեցող մանուկների ու պատանիների շրջանում ֆիզիկուլտուրային-առողջարարական և մարզական միջոցառումների կազմակերպում
- Ֆիզիկուլտուրայի ուսուցիչների և մարզիչ-մանկավարժների համար վերապատրաստման ու որակավորման դասընթացների կազմակերպում
- <<Մրցաշրջան -2014>>-ի մարզի լավագույն մարզիկների ու մարզիչների որոշում, նրանց խրախուսման և պարգևատրության ներկայացում:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ

ՀՀ Շիրակի մարզի 2014-2017 թթ. սոցիալ - տնտեսական զարգացման ծրագրի մշակույթի և սպորտի ոլորտների 2014թ. գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի

մլն դրամ

Ոլորտը/ֆինանսավորման աղբյուրը	2014թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄՁԾ-ի	2014թ.ՏԱՊ-ով նախատեսվող իրատեսական ծրագրերը	ՄՁԾ-ով նախատեսված և ՏԱՊ-ի ֆինանսական միջոցների տարբերությունը /շեղում/
Սպորտ	76.0	76.0	0
<i>որից՝</i>			
ՀՀ պետական բյուջե			
դոնորներ			
համայնքային բյուջե			
Այլ աղբյուրներ /մասնավոր ներդրողներ/	76.0	76.0	0

2.3 Առողջապահություն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 2014-2017թթ սոցիալ տնտեսական զարգացման ծրագրի 2014թ. տարեկան աշխատանքային պլանով առողջապահական համակարգում իրականացնել նախատեսվում են լուրջ բարեփոխումներ: Տարվա ընթացքում կլուծվի մարզում առողջապահության բնագավառի առաջնահերթ նպատակներից մեկը՝ ախտաբանաանատոմիական լաբորատորիայի կառուցումը:

Մարզի առաջնային բուժօգնության զարգացումը կխթանի դիմող հիվանդների վաղ ախտորոշվելուն, ամբուլատոր բուժօգնության ծավալների ավելացմանը, որը կկրճատի ստացիոնար պայմաններում բուժվող հիվանդների քանակը և կնպաստի մարզի առողջապահության համակարգի ֆինանսական միջոցների խնայողությանը:

Նախատեսվում է վերազինել մարզի գյուղական ամբուլատորիաները, դրանք համալրելով նոր սարքավորումներով:

Ելնելով մարզային առանձնահատկություններից կիրականացվեն միջոցառումներ՝ մարզի առողջապահության համակարգի զարգացման համար, մասնավորապես մարզի գյուղական առողջապահական հիմնախնդիրների բարելավման, հիվանդանոցային համակարգում պետական միջոցների արդյունավետ

օգտագործման, մոր և մանկան առողջության բարելավման, ՄԻԱՎ/ՁԻԱՀԻ, մալարիայի և վարակիչ հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ:

Աշխատանք կտարվի բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների որակի և մատչելիության բարձրացման նպատակով: Սույն նպատակի իրագործման ռազմավարությունը ներառում է առողջության առաջնային պահպանման մակարդակի բարձրացում, առաջնային և երկրորդային մասնագիտական բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ ցուցաբերող հաստատությունների նյութատեխնիկական բազաների բարելավում, կադրերի մասնագիտացում և շարունակական վերապատրաստում, շտապ բուժօգնության ծառայության ուժեղացում, ախտաբանաանատոմիական ծառայության բարեփոխում: Այս միջոցառումների ապահովումը նախատեսվում է իրականացնել պետական բյուջեի միջոցների հաշվին, <<World Vision Armenia>> և <<Բժիշկներ առանց սահմանի>> բարեգործական հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում:

Նախատեսվում է մարզի միջին բուժաշխատողների համար 2014թ. կազմակերպել վերամասնագիտացման դասընթացներ տեղում:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ

ՀՀ Շիրակի մարզի 2014-2017 թթ. սոցիալ- տնտեսական զարգացման ծրագրի առողջապահության ոլորտի 2014թ. գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի

մին դրամ

Ոլորտը/ֆինանսավորման աղբյուրը	2014թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄԶԾ-ի	2014թ.ՏԱՊ-ով նախատեսվող իրատեսական ծրագրերը	ՄԶԾ-ով նախատեսված և ՏԱՊ-ի ֆինանսական միջոցների տարբերությունը /շեղում/
Առողջապահություն	72.8	93.0	20.2
<i>որից՝</i>			
ՀՀ պետական բյուջե			
դոնորներ			
համայնքային բյուջե			
Այլ աղբյուրներ /մասնավոր ներդրողներ/	72.8	93.0	20.2

2.4 Սոցիալական պաշտպանություն

ՀՀ Շիրակի մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի սոցիալական պաշտպանության ոլորտում մարզի զարգացման գերակա նպատակ է համարվում սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության բարձրացումը: 2014 թվականին նախատեսվում է սոցիալական ծրագրերի գծով բնակչության իրազեկության բարձրացման, սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության միջոցառումների ընդլայնման, սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստման, սոցիալական ծառայություններ տրամադրող մարմինների նյութատեխնիկական բազայի բարելավման, ինչպես նաև սոցիալական ծառայությունների համակարգի կառավարման բարելավմանն ուղղված միջոցառումներ:

Մարզի համար սոցիալական պաշտպանության բնագավառում կարևորվում է բնակչության սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության ծառայությունների ընդլայնումը: Այդ ուղղությամբ նախատեսվում է.

- Սոցիալական ծառայությունների հասանելիության և մատչելիության ապահովման նպատակով մարզում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ամբողջական և լիարժեք ներդրում՝ սոցիալական համալիր ծառայությունների տրամադրում <<Մեկ պատուհան>> սկզբունքով:

- Հաշմանդամներին /հատկապես հաշմանդամ երեխաներին /վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովումը, ինչպես նաև նրանց հասարակության մեջ ինտեգրելու ծրագրերի իրականացումը

- Հաշմանդամների համար աշխատատեղերի ստեղծում

- Տարեցների ցերեկային և խնամքի ծառայությունների ստեղծում

- Հաշմանդամների համար սոցիալ-հոգեբանական վերականգնողական ցերեկային կենտրոնների ստեղծում.

Աշխատանք կտարվի խնամքի կարիք ունեցող միայնակ տարեցների և Ցհաշմանդամություն ունեցող անձանց համար արժանապատիվ կենսապայմանների ապահովման, նրանց կյանքի որակի բարելավման, խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների ներդրման, ինչպես նաև զբաղվածության խնդիրների լուծման ուղղությամբ:

Միջոցառումներ կիրականացվեն երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի զարգացման, երեխաների սոցիալական պաշտպանության, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների պաշտպանության ու հասարակության մեջ նրանց ինտեգրմանն ուղղված ծրագրերի իրականացման, այդ թվում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների ընդլայնման ուղղությամբ, ինչը ենթադրում է երեխաների իրավունքների և շահերի պաշտպանություն, բազմամասնագիտական /սոցիալ-հոգեբանական և բժշկական վերականգնման աշխատանքների իրականացում/ աջակցության ցուցաբերում:

Կշարունակվի ԽՍՀՄ խնայբանկում մինչև 1993թ. ներդրված ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման ծրագիրը:

Կմատուցվեն սոցիալական և այլ իրավունքների վերաբերյալ խորհրդատվական, <<Գենդերային քաղաքականության>> և <<Ընդդեմ գենդերային բռնության>> ծրագրեր, ինչպես նաև թրաֆիկինգի երևույթի կանխարգելման, զոհերի ուղղորդմանն և նրանց հոգեբանական վերականգնողական ծրագրերի իրականացման ծառայություններ:

Որպես մասնագիտական պատրաստվածության աստիճան և ծրագրերի իրականացման արդյունավետության վրա ազդող հիմնական գործոն, կկարևորվի պետական և ոչ պետական սոցիալական ծառայություններ մատուցող մասնագետների կողմից հաճախորդների կարիքների գնահատման հմտությունների ուսուցանումը, դոնորներ, հովանավորներ որոնելու հմտությունների զարգացումը, հաշմանդամներին և ծերերին խնամելու համար խնամողների վերապատրաստումը /այդ թվում խնամքը տան պայմաններում կազմակերպելու համար/:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ

ՀՀ Շիրակի մարզի 2014-2017 թթ. սոցիալ- տնտեսական զարգացման ծրագրի սոցիալական պաշտպանության ոլորտի 2014թ. գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի

մլն դրամ

Ոլորտը/ֆինանսավորման աղբյուրը	2014թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄԶԾ-ի	2014թ.ՏԱՊ-ով նախատեսվող իրատեսական ծրագրերը	ՄԶԾ-ով նախատեսված և ՏԱՊ-ի ֆինանսական միջոցների տարբերությունը /շեղում/
Սոցիալական պաշտպանություն <i>որից՝</i>	1080.0	1080.0	0
ՀՀ պետական բյուջե	20.0	20.0	0
դոնորներ	1060.0	1060.0	0
համայնքային բյուջե			
Այլ աղբյուրներ /մասնավոր ներդրողներ/			

4.ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզի տնտեսության զարգացման մեջ կարևորագույն դեր ունի գյուղատնտեսության ոլորտը: Գյուղատնտեսության արտադրողականության բարձրացումը ՀՀ Շիրակի մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի հիմնական նպատակներից է: Գյուղատնտեսության ռազմավարության գլխավոր նպատակն է ավելացնել գյուղացիական տնտեսությունների եկամուտները և կրճատել աղքատությունը գյուղական բնակավայրերում: Շիրակի մարզի ագրոկլիմայական ռեսուրսների ընձեռած հնարավորությունների և բնակչության ու շուկայի պահանջներին համապատասխան այստեղ առավել զարգացում են ստացել հացահատիկի, բանջարեղենի և կերային մշակաբույսերի մշակությունը: Վերջին տարիներին մարզի գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային կառուցվածքում տեղի են ունեցել էական փոփոխություններ, կայունացել է հացահատիկի արտադրությունը, բերքատվության ցուցանիշը վերջին երկու տարիներին հասել է 27-30ց, ավելացել է հատկապես կարտոֆիլի արտադրությունը, որտեղ բավարար ուշադրություն է դարձվում կարտոֆիլի սորտաթարմացմանը, ռոտզմանը, պարարտանյութերի օգտագործմանը: Բանջարանոցային մշակաբույսերի արտադրության և բազմամյա կերային մշակաբույսերի ցանքատարածությունների ընդարձակման ուղղությամբ նույնպես առաջընթաց կա:

Աշնանացան ցորենի սերմնաբուծության եւ սերմարտադրության զարգացման ծրագրերի իրականացման շնորհիվ գրանցվեց ցանքատարածությունների ավելացում 2631 հեկտարով: Նման ծրագրերի շարունակական լինելու դեպքում 2014թ. մարզի գյուղատնտեսության բնագավառը կունենա բարձր ցուցանիշներ:

ՀՀ Շիրակի մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում սահմանված թիրախ է կառուցել կարտոֆիլի և բանջարեղենի վերամշակման փոքրածավալ գործարաններ, ֆերմերային և գյուղացիական տնտեսությունների հողակտորներն արդյունավետ օգտագործելու համար կազմել ցանքաշրջանառության նախագծեր, հացահատիկային մշակաբույսերի սորտաթարմացման, բարձր վերարտադրության բերքատու սերմերի բազմացման նպատակով ամեն տարի ներկրել ցանկացած՝ Հայաստանի Հանրապետությունում օգտագործման և հետագա բազմացման համար թույլատրված բույսերի սորտերի ցանկում գրանցված սորտ, որը բերքատվության լավ ցուցանիշներ է ապահովում մարզում ընդունված

ստանդարտ սորտերի համեմատությամբ, որի ուղղությամբ ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 29-ի թիվ 971-Ն որոշմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականների ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագրով» մարզին հատկացվել է 120.15տ էլիտար և 1335տ առաջին վերարտադրությունների ցորենի սերմացու սերմարտադրության ծրագիր իրականացնելու համար: Ծրագիրը շարունակվելու է 2014թ.:

2014 թվականին մարզի հողօգտագործողներին հանրապետությունում իրականացվող ծրագրերի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ազոտական պարարտանյութի և դիզելային վառելիքի հատկացման ծրագրեր:

Նախատեսվում է ընդլայնել գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման ծավալները, ինչը կնպաստի կաթի և մսի մթերատվության բարձրացմանը, աշխատանք կտարվի մարզում տոհմային տնտեսություններ ձևավորելու համար, որոնք կաջակցեն անասնապահությամբ զբաղվող գյուղացիական տնտեսություններին, խոշոր անասնապահական ֆերմաներում կձեռնարկվեն տոհմասելեկցիոն աշխատանքներ:

Միջոցներ կձեռնարկվեն գյուղացիական տնտեսություններին ցածր տոկոսադրույքներով վարկավորման և անտոկոս վարկերի տրամադրման ծրագրերի շարունակականությունն ու ընդգրկված համայնքների ցանկը ընդլայնելու ուղղությամբ:

Կերային և բանջարաբուստանային մշակաբույսերի բերքատվության բարձրացման նպատակով Գյումրու սելեկցիոն կայանում կշարունակվեն կորնգանի, առվույտի և վարսակի սորտային սերմերի բարձր վերարտադրության սերմանյութի արտադրությունը, ինչպես նաև գարու, եգիտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրերը:

2014թ. շարունակվելու են ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղական բարեփոխումների աջակցություն» ԾԻԳ պետական հիմնարկի կողմից իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրով մարզի մի շարք համայնքներում անասնապահության և արոտավայրերի կառավարման համակարգերի ստեղծման աշխատանքները: Կշարունակվի գյուղատնտեսական տեխնիկայի թարմացման լիզինգային կարգով իրականացվող ծրագիրը:

ՀՀ պետական բյուջեի տրամադրված /23մլն դրամ ընդհանուր արժեքով/ միջոցների հաշվին վերանորոգվելու է Շիրջրանցքի գլխամասային հանգույցը:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ

ՀՀ Շիրակի մարզի 2014-2017 թթ. սոցիալ- տնտեսական զարգացման ծրագրի գյուղատնտեսություն ոլորտի 2014թ.

գնահատված կարիքների և տարեկան

աշխատանքային պլանի

մլն դրամ

Ոլորտը/ֆինանսավորման աղբյուրը	2014թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄԶԾ-ի	2014թ.ՏԱՊ-ով նախատեսվող իրատեսական ծրագրերը	ՄԶԾ-ով նախատեսված և ՏԱՊ-ի ֆինանսական միջոցների տարբերությունը /շեղում/
Գյուղատնտեսություն	5213.0	5213.0	0

որից՝			
ՀՀ պետական բյուջե	4862.0	4862.0	0
դոնորներ			
համայնքային բյուջե			
Այլ աղբյուրներ /մասնավոր ներդրողներ/	351.0	351.0	0

4.ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

<<ՀՀ Շիրակի մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով>> բնապահպանության ոլորտում 2014թ. ընթացքում նախատեսվում է կատարել հետևյալ աշխատանքները.

1.Կենսառեսուրսների պահպանություն. ՀՀ Շիրակի մարզում 2014թ. իրականացվող բնապահպանական ծրագրերից կարևորագույնը <<Արփի լիճ>> ազգային պարկի ստեղծման ծրագիրն է: Արփի լճին և նրա շրջակա ջրաճահճային, մերձալպյան և մարգագետնատափաստանային էկոհամակարգերին <<Բնության հատուկ պահպանվող տարածքի>> կարգավիճակի շնորհումը մեծ նշանակություն ունեցավ ոչ միայն տարածաշրջանային էկոհամակարգերի լանդշաֆտային, կենսաբանական ուրույն բազմազանության, բնության առանձին օբյեկտների պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, բնական և ռեկրեացիոն ռեսուրսների կայուն օգտագործման ապահովման համար, այլև նոր հնարավորություններ տեղեց գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման համար՝ այնտեղ ամառային և ձմեռային տուրիզմի կազմակերպման, ալտերնատիվ էներգիայի և գյուղատնտեսական մթերքների արտադրության և այլ գործունեությունների ծավալման միջոցով: Այս ծրագրի օժանդակությամբ ազգային պարկի պահպանման գոտու Շաղիկ, Գառնառիճ, Ծաղկուտ, Ջորակերտ, Արդենիս, Աղվորիկ, Ալվար, Սիգավետ, Մեծ Մեպասար և Կրասար համայնքներում 2014թ. ընթացքում կիրականացվի խմելու ջրի մատակարարման համակարգերի բարելավման ծրագիրը:

2.Անտառների պահպանություն և ընդլայնում. Անցած չորս տարիների ընթացքում ՀՀ Շիրակի մարզում որոշակի աշխատանքներ են կատարվել անտառավերականգնման և նոր անտառների հիմնման ուղղությամբ: Գյումրու, Արթիկի, Լեռնակերտի, Սառնաղբյուրի, Աշոցքի և Ջաջուռի տեղամասերում այդ տարիների ընթացքում հիմնվել է շուրջ 130հա նոր անտառազանգված: ՀՀ կառավարության 2013թ. մարտի 21-ի թիվ 258-Ն որոշմամբ ֆինանսական միջոցներ են հատկացվել Գյումրու անտառտնտեսության Լեռնակերտի տեղամասում ևս 20հա նոր անտառազանգված հիմնելու համար: Հողի նախապատրաստման և տարածքի ցանկապատման աշխատանքներն արդեն իրականացվել են, իսկ 2014թ. գարնան ընթացքում կիրականացվեն ծառատնկման աշխատանքներ:

2014թ. նախատեսվում է մարզի համայնքներում իրականացնել համայնքային անտառների հիմնման աշխատանքներ: Այդ կապակցությամբ պայմանավորվածություն է ձեռք բերվել <<Էյ Թի ՓԻ>> բարեգործական հիմնադրամի <<Հայաստան ծառատունկ>> ծրագրի տնօրինության հետ՝ համապատասխան տնկիներ ձեռք բերելու և համայնքներին տրամադրելու ուղղությամբ:

3. Հողերի պահպանություն և օգտագործում. Ընթացիկ տարում զգալի աշխատանքներ կկատարվեն նաև «Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում գյուղամերձ և հեռագնա արոտավայրերում բարելավման միջոցառումների իրականացման ուղղությամբ: 2014թ. այդ ծրագրում ընդգրկվելու են մարզի Արևշատ, Նահապետավան, Սարալանջ և Ծաղկուտ համայնքները, որոնց տարածքներում իրականացված արոտների բարելավման և ջրարբիացման միջոցառումների շնորհիվ էապես կբարելավվի ոչ միայն վերջիններիս արդյունավետ օգտագործման մակարդակը, այն նաև լուրջ ներդրում կհանդիսանա ռեսուրսների պահպանության և հնարավոր էրոզիոն պրոցեսների կանխարգելման համար:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ

ՀՀ Շիրակի մարզի 2014-2017 թթ. սոցիալ- տնտեսական զարգացման ծրագրի բնապահպանության ոլորտի 2014թ. գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի

մլն դրամ

Ոլորտը /ֆինանսավորման աղբյուրը	2014թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄԶԾ-ի	2014թ.ՏԱՊ-ով նախատեսվող իրատեսական ծրագրերը	ՄԶԾ-ով նախատեսված և ՏԱՊ-ի ֆինանսական միջոցների տարբերությունը /շեղում/
Բնապահպանություն	170	270	100
<i>որից՝</i>			
ՀՀ պետական բյուջե	30	30	0
դոնորներ	140	240	100
համայնքային բյուջե	0	0	0
Այլ աղբյուրներ /մասնավոր ներդրողներ/	0	0	0

5. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

2014թ. քաղաքաշինության բնագավառի հիմնախնդիրները կապված են երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած քաղաքացիների բնակարանային խնդիրների լուծման, զոհված /մահացած/ և հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների/ ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման, ինչպես նաև կրթական, առողջապահական, մշակութային, ճանապարհաշինության և այլ ոլորտներում մարզի համայնքների կողմից իրականացվող քաղաքաշինական գործունեության վերահսկողության հետ:

Մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2014թ. նախատեսված է քաղաքաշինության ոլորտում իրականացնել 15 մլրդ 979 մլն դրամի քաղաքաշինական աշխատանքներ: Ստորև ներկայացվում է տարեկան աշխատանքային պլանով ըստ ոլորտների նախատեսված աշխատանքները:

Բնակարանաշինության ոլորտում երկրաշարժի պատճառած վնասների վերականգնման նպատակով 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով 2014թ. նախատեսված 4 մլրդ 890 մլն. դրամի դիմաց Գյումրի քաղաքում իրականացվելու է 433 բնակարաններով թվով 8, իսկ Ախուրյան գյուղում 136 բնակարաններով թվով 4 բազմաբնակարան բնակելի շենքերի, մարզի 19 գյուղական համայնքներում թվով 167 բնակելի տների

կառուցման աշխատանքներ: Բնակարանաշինության ոլորտում 2014թ. նախատեսված ծրագրերը ներկայացվում են աղյուսակի տեսքով.

Աղյուսակ 1

Հ/Հ	Օբյեկտի անվանումը	Հատկացված գումարը /մլն.դրամ/	Ֆինանսավորման աղբյուրը
1	ք.Գյումրի	4 750.0	ՀՀ պետական բյուջե
2	ք. Ախուրյան	530.0	ՀՀ պետական բյուջե
4	Գյուղական 19 բնակավայրեր	1850.0	ՀՀ պետական բյուջե
	Ընդամենը	7130.0	

Կրթական օբյեկտների շինարարություն

Մարզի 2014-2017թթ. ՄԶԾ ծրագրի 2014թ-ին նախատեսված է թվով 44 կրթական օբյեկտներում նախատեսված է կատարել 2 մլրդ 945 մլն. դրամ գումարի աշխատանքներ, սակայն ծրագիր են ընդգրկվել թվով 9 օբյեկտներ, որոնցում կատարվել է 1 մլրդ 305 մլն. դրամ գումարի աշխատանքներ: Ըստ առանձին օբյեկտների՝ տվյալները ներկայացվում են աղյուսակի տեսքով:

Աղյուսակ 2

Հ/Հ	Օբյեկտի անվանումը	Հատկացված գումարը /մլն.դրամ/	Ֆինանսավորման աղբյուրը
1	Գյումրի-ՀՀ ԳԱԱ Ա.Նազարյանի անվան ԵԻՄԻ անավարտ շենքի կառուցում	298.4	ՀՀ պետական բյուջե
2	<<Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան>> ՊՈԱԿ-ում սահմանափակ կարողություններ ունեցող ուսանողների համար անհրաժեշտ հարմարություններով (սանդուղքներ, թեքահարթակներ, բազրիքներ, վերելակներ) համալրման աշխատանքներ	100.0	ՀՀ պետական բյուջե
3	<<Գյումրու թիվ 3 արհեստագործական պետական ուսումնարան>> ՊՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքներ	182.2	ՀՀ պետական բյուջե
4	ք. Գյումրի Արվեստի դպրոց Մ. Մկրտչյան 47 (Օյունջյան դպրոցի տարածք)	315.0	Դոնոր
5	<<Ամասիայի արհեստագործական պետական ուսումնարան>> ՊՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքներ	135.0	ՀՀ պետական բյուջե
6	Աշոցք համայնքի միջնակարգ դպրոցի կառուցում	60.0	ՀՀՀ
7	Ազատան համայնքի մանկապարտեզի կառուցում	95.0	ՀՀ պետական բյուջե ՀՄՆՀ

8	Գեղանիստի մանկապարտեզի շենքի կառուցում	90.0	Դոնոր
9	Անուշավան համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգում	29.1	ՀՀ պետական բյուջե
	Ընդամենը	1304.7	

Առողջապահության օբյեկտների շինարարություն

2014թ. ՀՄՆՀ-ի կողմից շարունակվելու են Մարալիկ քաղաքի հիվանդանոցի հիմնանորոգման և Գյումրու <<Պաթոլոգոանատոմիական լաբորատորիա>>-ի նոր շենքի կառուցման աշխատանքները: Ըստ առանձին օբյեկտների տվյալները ներկայացվում են աղյուսակի տեսքով:

Աղյուսակ 3

Հ/Հ	Օբյեկտի անվանումը	Հատկացված գումարը /մլն.դրամ/	Ֆինանսավորման աղբյուրը
1	Մարալիկի հիվանդանոցի շենքի հիմնանորոգում	67.0	ՀՀ պետական բյուջե ՀՄՆՀ
2	ք. Գյումրի <<Պաթոլոգոանատոմիական լաբորատորիա>>-ի նոր շենքի կառուցում	150.0	ՀՀ պետական բյուջե ՀՄՆՀ
	Ընդամենը	217.0	

Մշակույթի և սպորտի օբյեկտների շինարարություն

2014թ. տարեկան աշխատանքային պլանով մարզում նախատեսվում է աշխատանքներ իրականացնել թվով 20 մշակութային և 10 մարզական օբյեկտներում:

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից Գյումրի քաղաքում իրականացվելու են ֆուտբոլի ակադեմիայի, Ամասիայի մարզադպրոցի կառուցման, իսկ ՀՄՆՀ-ի կողմից Ամասիայի մարզամշակութային կենտրոնի վերանորոգման աշխատանքները: Ըստ առանձին օբյեկտների տվյալները ներկայացվում են աղյուսակի տեսքով:

Սպորտի օբյեկտների շինարարություն

Աղյուսակ 4.1

Հ/Հ	Օբյեկտի անվանումը	Հատկացված գումարը /մլն.դրամ/	Ֆինանսավորման աղբյուրը
-----	-------------------	------------------------------	------------------------

1	Մուշ-2 թաղամաս Գյումրու ֆուտբոլի ակադեմիա	60.0	Այլ աղբյուրներ
2	Ամասիայի մարզադպրոցի կառուցում	20.0	Այլ աղբյուրներ
3	Ամասիայի մարզամշակութային կենտրոն	114.0	ՀՀ պետական բյուջե ՀՄՆՀ
	Ընդամենը /սպորտային օբյեկտներ/	194.0	

Այլ օբյեկտների շինարարություն

Աղյուսակ 4.1

Հ/Հ	Օբյեկտի անվանումը	Հատկացված գումարը /մլն.դրամ/	Ֆինանսավորման աղբյուրը
1	Կաթողիկե եկեղեցու կառուցում	170	Այլ աղբյուրներ
2	Սարալանջի եկեղեցու կառուցում	30	Դոնոր
3	Ք. Գյումրի Շիրակի տարածաշրջանի մաքսատան վերակառուցման նպատակով տարածքի ձեռք բերում	12.5	Դոնոր
4	Շիրակի մարզի տարածաշրջանի մաքսատան վերակառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում	8.0	Դոնոր
	Ընդամենը	220.5	

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ

ՀՀ Շիրակի մարզի 2014-2017 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի քաղաքաշինության ոլորտի 2014թ. գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի

մլն դրամ

Ոլորտը/ֆինանսավորման աղբյուրը	ՄԶԾ-ով 2014թ. գնահատված կարիքները	2014թ.ՏԱՊ-ով նախատեսվող իրատեսական ծրագրերը	ՄԶԾ-ի և ՏԱՊ-ի տարբերությունը /շեղում/
Քաղաքաշինություն	15979.4	9066.2	-6913.2
որից՝			
ՀՀ պետական բյուջե	0	8300.7	8300.7
դոնորներ	0	515.5	515.5
համայնքային բյուջե	0	0	
Այլ աղբյուրներ /մասնավոր ներդրողներ/	15979.4	250.0	-15729.4

6. ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

6.1 Ճանապարհաշինություն

Ճանապարհաշինության ոլորտում 2014թ. ընթացքում ՀՀ Շիրակի մարզի զարգացման ծրագրով նախատեսվել է իրականացնել մարզային նշանակության ճանապարհների ձևաշին, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքներ, որի համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 105,2 մլն.դրամ գումար:

6.2 Ջրամատակարարում

2014թ. կիրականացվի Գերմանական KFW զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Շիրակի մարզի, ինչպես նաև Գյումրի քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի վերանորոգման ծրագրի 2-րդ փուլը, որի համար հատկացվել է կծախսվի 4 մլրդ 158 մլն դրամ գումար:

Նախատեսվել է նաև Կապսի ջրամբարի կառուցման նպատակով համապատասխան ուսումնասիրություններ կատարելու արդյունքում կազմել նախագիծա-նախահաշվային փաստաթղթեր, որի համար Գերմանական զարգացման վարկային բանկի աջակցությամբ և ՀՀ պետական բյուջեի միջոցներից հատկացվել է 192,3 մլն դրամ գումար :

6.3 Էներգետիկա

Գերմանական KFW բանկի աջակցությամբ <<ՀԷՑ>> ՓԲԸ-ի կողմից սեփական միջոցների հաշվին 2014թ. ընթացքում նախատեսվում է իրականացնել <<Գյումրի-2>> 220/110/10 կվ ենթակայանի վերանորոգման աշխատանքներ, որի համար հատկացվել է 415,6 մլն. դրամ գումար:

Նախատեսվում է մարզի համայնքներում վերանորոգել տրանսֆորմատորային ենթակայանները և տրանսֆորմատորային կայանները, ինչպես նաև անջատիչները, բաշխիչ բջիջները, բաժանիչները, գատիչ կարճ փակիչները:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ

ՀՀ Շիրակի մարզի 2014-2017 թթ. սոցիալ- տնտեսական զարգացման ծրագրի ենթակառուցվածքների ոլորտի

2014թ. գնահատված կարիքների և տարեկան

աշխատանքային պլանի

մլն դրամ

Ոլորտը /ֆինանսավորման աղբյուրը	2014թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄԶԾ-ի	2014թ.ՏԱՊ-ով նախատեսվող իրատեսական ծրագրերը	ՄԶԾ-ով նախատեսված և ՏԱՊ-ի ֆինանսական միջոցների տարբերությունը /շեղում/
Մարզային և համայնքային ենթակառուցվածքներ	15521.6	4871.1	-10650.5
<i>որից՝</i>			
ՀՀ պետական բյուջե	105.2	105.2	0
դոնորներ			
համայնքային բյուջե			

Այլ աղբյուրներ ներդրողներ/	/մասնավոր	13714.0	4765.9	-8948.1
-------------------------------	-----------	---------	--------	---------

10. ՏԱՐԱԾՔԱՑԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Տարածքային կառավարման բնագավառում 2014թ. նախատեսվում է բարձրացնել մարզի խորհուրդի դերն ու նշանակությունը մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների ներդաշնակ գործունեության ապահովման, տեղեկատվության փոխանակման, կազմակերպական բնույթի հարցերի քննարկման և ընթացիկ խնդիրների լուծման գործում:

Պետական կառավարման ոլորտում վարչարարության արդյունավետության բարձրացմանը զուգահեռ՝ հսկողական գործառնություններից անցում կատարել անձանց որակյալ, մրցունակ պետական ծառայություններ մատուցելուն:

ՀՀ փոխվարչապետ տարածքային կառավարման նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի «Վարչական հսկողության 2014 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 159-Ա հրամանի համաձայն 2014 թվականին վարչական հսկողություն իրականացնել մարզի թվով 39 համայնքներում: Վարչական հսկողության աշխատանքներն իրականացնել Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 20-ի ՆՀ-728 հրամանագրով սահմանված դրույթների և ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի և արդարադատության, առողջապահության, արտակարգ իրավիճակների, բնապահպանության, էկոնոմիկայի, էներգետիկայի և բնական պաշարների, գյուղատնտեսության, կրթության և գիտության, մշակույթի, պաշտպանության, աշխատանքի և սոցիալական հարցերի, սպորտի և երիտասարդության հարցերի, տրանսպորտի և կապի, քաղաքաշինության նախարարների, անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի, ոստիկանության պետի համատեղ հրամաններով հաստատված հարցաշարերին համապատասխան:

Վարչական հսկողության բնագավառում նոր պահանջների ու մոտեցումների ներդրմամբ, բարձրացնել համայնքների ղեկավարների և աշխատակազմերի աշխատակիցների պատասխանատվությունը՝ օրենսդրությամբ, աշխատակազմի կանոնադրությամբ և պաշտոնների անձնագրերով իրենց վերապահված լիազորությունների իրականացման գործում:

Վերահսկողության գործառնությունից հստակեցմանը զուգահեռ ավելի մեծ կարևորություն տալ մարզպետարանի համակարգման գործառնություններին, ելնելով Հայաստանի Հանրապետության կառավարության զարգացման ծրագրերով ամրագրված ինստիտուցիոնալ զարգացման, աղքատության հաղթահարման, տարածքների համաչափ զարգացման գերակայությունների տրամաբանությունից:

Շարունակել էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման աշխատանքները՝ առաջնահերթ համարելով այն ոլորտները, որտեղ դրանց կիրառումն առավել արդյունավետ է ինչպես պետական, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ժամանակային ծախսերի կրճատման, կառավարման թափանցիկության ու վերահսկելիության ավելացման առումով:

Հետևողական աշխատանք իրականացնել մարզի տարածաշրջանների և համայնքների համաչափ զարգացումն ապահովելու ուղղությամբ, որը պետք է նպատակաուղղված լինի մարզի հատկապես թույլ

զարգացած, բարձր լեռնային և սահմանամերձ համայնքների զարգացման տեմպերի արագացմանն ու ներդրումների աճին:

Հստակեցնել, պարզեցնել և արդյունավետ դարձնել մարզպետարանի կողմից ՏԻՄ-երին տրամադրվող մեթոդաբանական օգնությունը, ապահովել մարզպետարանի և ՏԻՄ-երի համատեղ և համաձայնեցված գործունեություն:

10.1 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Տեղական ինքնակառավարման բնագավառում 2014 թվականին համայնքների կարողությունների զարգացման, բյուջեների մուտքերի կայունության և շարունակական աճի ապահովման միջոցով կավելանան տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների ծավալներն ու տեսականին, կբարձրանա դրանց որակն ու մատչելիությունը:

Տարվա ընթացքում կգույքագրվի մարզի համայնքներում ծառայությունների մատուցման առկա իրավիճակը, ըստ առանձին բնագավառների կմշակվեն և համապատասխան առաջարկություններ կներկայացվեն՝ ծառայությունների մատուցման բնագավառում բարեփոխումների կոնկրետ քայլեր ձեռնարկելու ուղղությամբ:

Նախատեսվում է տեղական ինքնակառավարման մարմինների կառավարման հմտությունների և ունակությունների բարձրացման նպատակով 2014 թվականին նախապատրաստել և անցկացնել 25 համայնքների ղեկավարների և համայնքի ավագանու 75 անդամների ուսուցում:

Աշխատանք կտարվի 2014թ. մարզի համայնքապետարանների աշխատակազմերի թվաքանակը համապատասխանեցնելու ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից առաջարկված օպտիմալ թվաքանակին:

Տարվա ընթացքում կապահովվի մարզի բոլոր համայնքների ավագանիների որոշումների առաքումը ՀՀ Շիրակի մարզպետարան: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77.5 հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան ուսումնասիրել ստացված բոլոր որոշումների համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը, ոչ իրավաչափ որոշումների վերաբերյալ կազմել համապատասխան առարկություններ և ապահովել իրավական ակտերի համապատասխանեցումը ՀՀ օրենսդրությանը:

Կապահովվի նաև մարզի բոլոր համայնքներում տեղեկատվական ցուցատախտակների առկայությունը և դրանց միջոցով համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի և ծրագրային փաստաթղթերի հանրային իրազեկումը:

Կկազմակերպվի ընտրանքային կարգով համայնքներում կազմակերպել համայնքի զարգացման ծրագրերի և բյուջեի կառավարման գործընթացների հանրային քննարկումներ:

Համայնքային ծառայության բնագավառ

Պետական լիազոր մարմին առաջարկություն կներկայացվի համայնքային ծառայության թափուր տեղերի մրցույթների և ատեստավորումների անցկացման հարցաշարերը ՀՀ գործող օրենսդրությանը և համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերում ներառված գիտելիքներին ու հմտություններին ներկայացվող պահանջներին համապատասխանեցնելու վերաբերյալ և համայնքային ծառայության թափուր տեղերի համար

անցկացվող մրցույթների և համայնքային ծառայողների ատեստավորումների արդյունքների վերաբերյալ կազմվող փաստաթղթերի փաթեթները հաստատվելու և պարզեցնելու վերաբերյալ:

Կկազմակերպվի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների անդամների ուսուցում, կկազմվի և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն կներկայացվեն 2015թ. վերապատրաստման ենթակա մարզի համայնքային ծառայողների ցուցակները:

2014թ. նախատեսվում է անցկացնել մարզի թվով 150 համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացները:

Աշխատանք կտարվի ապահովելու համայնքային ծառայության թափուր պաշտոններն զբաղեցնելու մրցույթների անխափան ընթացքը, հրապարակայնությունն ու թափանցիկությունը: Սահմանված կարգով ՀՀ տարածքային կառավարման նախարարություն կներկայացվի հայտարարված մրցույթերի ժամանակացույցերը, անցկացված մրցույթների ու համայնքային ծառայողների ատեստավորումների արդյունքները, համայնքային ծառայողների գրանցամատյանում կատարվելիք փոփոխությունները:

2014 թվականին ծրագրվում է նաև մարզի բոլոր համայնքներն ապահովել ժամանակակից համակարգիչներով և իրենց գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ ծրագրերով:

Մարզի խորհրդի նիստերի, մարզպետարանի ինտերնետային կայքի և ՁԼՄ-երի միջոցով համայնքները կիրառվեն տեղական ինքնակառավարման ոլորտին առնչվող իրավական ակտերի, նրանցում կատարվող փոփոխությունների ու լրացումների մասին:

Մարզի թվով 54 համայնքներում կապահովվի ներդրված համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի անխափան շահագործումը և ՀՀ պետական կառավարման մարմիններում գործող <<Mulberry>> համակարգի հետ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը, ինչպես նաև մարզի 3 քաղաքային և 3000-ից ավելի բնակչություն ունեցող բոլոր 6 գյուղական համայնքներում տեղադրված պաշտոնական կայքերի անխափան շահագործումը և դրանց միջոցով տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը:

10.3 Քաղաքացիական հասարակություն. Հեռուստատեսության միջոցով պարբերաբար կհեռարձակվեն հաղորդումներ՝ ներկայացնելով մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի, մարզային ենթակայության կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը, գոյություն ունեցող հիմնախնդիրները և իրականացվող ծրագրերը:

ՁԼՄ-ով պարբերաբար կհրապարակվեն առավել լայն կիրառություն ունեցող օրենքներն ու նորմատիվ բնույթի իրավական ակտերը, դրանցում կատարվող փոփոխությունները՝ տալով պարզաբանումներ և մեկնաբանություններ:

Հասարակության հետ հարաբերությունները, այդ թվում տեղեկատվության տարածումը, կկազմակերպվի ոչ միայն մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների, այլև մարզում գործող հասարակական կազմակերպությունների միջոցով:

Հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներն մասնակից կդառնան մարզխորհրդի նիստերին, ինչպես նաև մարզպետարանում ձևավորվող մշտական և ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքներին:

Ընտրանքային կարգով մարզի խոշոր համայնքներում կկազմակերպվեն համայնքի զարգացման ծրագրի, բյուջեի, հողերի օգտագործման սխեմայի և գլխավոր հատակագծի հրապարակային քննարկումներ: Հասարակական կազմակերպությունների և համայնքների ակտիվ հասարակական խմբերի ներկայացուցիչներին մասնակից կդառնան համայնքի ավագանու նիստերին:

Հասարակական կազմակերպությունների միջոցով կկազմակերպվեն բնակչության իրազեկման այնպիսի ծրագրեր, որոնց արդյունքում բնակչությանը իրավական տեղեկատվություն և խորհրդատվություն կտրամադրվի գույքային իրավունքների, հարկային պարտավորությունների, պայմանագրային հարաբերությունների, վարկերի ստացման և բնակչությանը հուզող այլ հարցերի վերաբերյալ:

11. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

2014 թվականին ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության, մարզի տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ նախատեսվում է իրականացնել մի շարք միջոցառումներ՝ ուղղված արտակարգ իրավիճակների կանխարգելմանը, բնակչության և տարածքների պաշտպանությանը:

Բնական և տեխնածին աղետների ռիսկի նվազեցման նպատակով 2014 թվականին մարզում նախատեսվում է հետևողական աշխատանք իրականացնել համայնքների սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզների կազմման աշխատանքների ավարտման և համայնքների զարգացման ծրագրերում դրանց ներառման ուղղությամբ:

Կիրականացվի մշտական համագործակցություն աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ /ԱՌՆԱՊ/ հիմնադրամի և միջազգային կազմակերպությունների հետ՝ մարզում աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ իրականացվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, մասնավորապես սելավատարերի մաքրմանը՝ ըստ առաջնահերթության, սողանքային գոտիների ուսումնասիրմանը, հակասողանքային միջոցառումների իրականացմանը, ապաստարանների և ստորգետնյա անցումների մաքրմանը, հակակարկտային կայանների ավելացմանը:

Մարզի համայնքներում բնակչության ազդարարման համար նախատեսվում է ձեռք բերել և տեղադրել էլ.շչակներ, հիմնել կենտրոնացված ազդարարման համակարգ, իրականացնել բնակչության իրազեկվածության բարձրացման ուղղությամբ աշխատանքներ:

2014 թվականին նախատեսվում է նաև Գյումրիում ստեղծել նյութական միջոցների անձեռնամխելի պաշարներ /կուտակել պահեստներում/ արտակարգ իրավիճակների հետևանքով տուժած բնակչությանը առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովելու համար:

Բնական և տեխնածին աղետների ժամանակ բնակչության պաշտպանվածության խնդիրները մշտապես պետք է գտնվեն մարզպետարանի ուշադրության կենտրոնում: Մարզում աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով 2014 թվականի ընթացքում

կշարունակվի համագործակցությունը աղետների ռիսկի նվազեցման ազգային պլանֆորմ հիմնադրամի և միջազգային կազմակերպությունների հետ:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ

ՀՀ Շիրակի մարզի 2014-2017 թթ. սոցիալ- տնտեսական զարգացման ծրագրի արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանություն ոլորտի 2014թ. գնահատված կարիքների և տարեկան

աշխատանքային պլանի

մլն դրամ

Ոլորտը /ֆինանսավորման աղբյուրը	2014թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄԶԾ-ի	2014թ.ՏԱՊ-ով նախատեսվող իրատեսական ծրագրերը	ՄԶԾ-ով նախատեսված և ՏԱՊ-ի ֆինանսական միջոցների տարբերությունը /շեղում/
Արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանություն	50.8	50.8	0
<i>որից՝</i>			
ՀՀ պետական բյուջե			
դոնորներ			
համայնքային բյուջե	50.8	50.8	0
Այլ աղբյուրներ /մասնավոր ներդրողներ/			

12. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԶԾ իրականացման համար կարևորվում է 2014 թվականին իրականացվելիք միջոցառումների մոնիտորինգը և գնահատումը, որն անհրաժեշտ է նաև նպատակային շահագրգիռ կողմերի հետ կապի պահպանման և նրանց տեսակետներն ու կարիքները հաշվի առնելու համար: Մոնիտորինգի և գնահատման հայեցակարգի մշակման, իսկ հետագայում նաև դրա իրականացման նպատակով ստեղծվել է մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խմբի կազմը, որտեղ ընդգրկվել են մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Խմբի ղեկավարը Շիրակի մարզպետի տեղակալն է: Մոնիտորինգի և գնահատման համակարգը կվերահսկի ՏԱՊ-ի կատարումը և կամփոփի 2014 թվականի գործունեության արդյունքները:

ՄԶԾ մոնիտորինգի և գնահատման համակարգը ներառում է այն բոլոր ցուցանիշները, որոնք հնարավոր կլինի գնահատել մարզային մակարդակով:

Մոնիտորինգի և գնահատման միջանկյալ և տարեկան հաշվետվությունները կպատրաստվեն մարզպետարանի ՄԳ խմբի կողմից:

Միջանկյալ հաշվետվությունը կներառի տրամաբանական հենքի հիման վրա կատարված քաղաքականությունների վերլուծության արդյունքները: Այն կմշակվի 2014 թվականի առաջին կիսամյակում իրականացված և իրականացվելիք միջոցառումների գնահատման արդյունքում: Միջանկյալ հաշվետվությունը կպատրաստվի 2014 թվականի հուլիս ամսին:

Տարեկան հաշվետվությունը կամփոփվի տարվա ընթացքում ՏԱՊ-ով նախատեսված բոլոր միջոցառումների վերաբերյալ ՄԶԾ մոնիտորինգի և գնահատման համակարգից ստացված արդյունքների ամփոփ վերլուծության հիման վրա:: Այն կպատրաստվի 2015 թվականի հունվար ամսին և կներառի հետևյալ գլխավոր բաժինները.

1. ՄԶԾ-ի շրջանակներում իրականացված միջոցառումները, դրանց գծով կատարված ծախսերը, արդյունքները

2. Հաջորդ տարվա հիմնախնդիրները, այդ թվում՝ քաղաքականությունների ուրվագծումը:

Մոնիտորինգի և գնահատման տարեկան հաշվետվությունը պատրաստելուց հետո կկազմակերպվի քննարկում, որին կմասնակցեն ինչպես մարզի խորհրդի, այնպես էլ քաղաքացիական հասարակության և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Քննարկումը կարևոր մի նախաձեռնություն է քաղաքացիական հասարակությունը ՄԶԾ-ի մոնիտորինգի մեջ ընդգրկելու, ինչպես նաև ՄԶԾ-ի իրականացման հաջողությունները ներկայացնելու և նոր դոնորներ ներգրավելու համար:

Մոնիտորինգի և գնահատման տարեկան հաշվետվությունը կտեղադրվի մարզպետարանի վեբ-կայքում:

Մոնիտորինգի խմբի աշխատանքներին պարբերաբար կհետևի Շիրակի մարզի խորհուրդը և Մարզային զարգացման հանձնաժողովը:

13. ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՑԻՆ ՊԼԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

ՄԶԾ իրագործման համար 2014թ. պահանջվող ֆինանսական միջոցները և նրանց ծախսման ուղղությունները գնահատվել են, պահանջվող ընդհանուր գումարը կազմել էր ավելի քան 41 մլրդ 330 մլն դրամ, այդ թվում ՀՀ պետական բյուջեից հատկացումներ՝ 881.1 մլն դրամ, դոնորների կողմից՝ 5 մլրդ 972 մլն դրամ, այլ աղբյուրներից 31 մլրդ 595 մլն դրամ, համայնքների ֆոնդային բյուջեներով՝ 1 մլրդ 1 մլն դրամ,:

2014 թվականի ՏԱՊ-ով իրականացվելու է ավելի քան 60 միջոցառում, ֆինանսավորումը կազմելու է 23 մլրդ 335 մլն դրամ, այդ թվում ՀՀ պետական բյուջեի հատկացումներ՝ մոտ 15 մլրդ 249 մլն դրամ, միջազգային դոնոր և այլ կազմակերպությունների հատկացումներ՝ 1 մլրդ 866 մլն դրամ, համայնքային բյուջեներից՝ 720.3 մլն դրամ, այլ աղբյուրներից 5 մլրդ 500 մլն դրամ:

ՀՀ Շիրակի մարզի 2011-2014 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2014թ. գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի համեմատականը տրված է *աղյուսակ 1*-ում:

2014 թվականին տարեկան աշխատանքային պլանով նախատեսված ծրագրերի ֆինանսավորումը կիրականացվի համաձայն *աղյուսակ 2*-ում տրված ծավալների: